



Լ. ԲԱԲԱՅԱՆ

Վ. ՄԱՐՏՅԱՆ

(Ճարտարապետներ)

## Վ Ե Ր Ա Ծ Ն Վ Ա Ծ Ժ Ո Ղ Ո Վ Ր Գ Ի Ի Ն Ո Ր Ո Գ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Իր տևական պատմության բոլոր փուլերում հայ ժողովուրդը իրեն դրսևորել է որպես ճարտար կառուցող և աշխատասեր ժողովուրդ: Ամեն անգամ, երբ հայկական լեռնաշխարհում փոքրիշատե խաղաղ ու տրևտեսապես նպաստավոր պայմաններ են առաջացել, մեր նախնիները քարը-քարի վրա են դրել, կառուցելով տաճարներ ու վանքեր, քաղաքներ ու ամրոցներ, դղյակներ ու պալատներ, կամուրջներ ու քարավանատներ, և իհարկե նաև գեղջկական բնակարաններ ժայռափոր, քարաշեն ու փայտակերտ...

Կառուցելը սերնդե-սերունդ հանդիսացել է մեր ժողովրդի ժառանգական հատկությունը, նրա մասնագիտությունը: Կառուցելու բովանդակ է ստեղծվել է ժողովրդի քարակերտ մատենագրությունը՝ հայկական ճարտարապետությունը, որի զարգացման ու ծաղկման յուրաքանչյուր փուլը մարմնավորել է նրան ստեղծող ժողովրդի մաքառումներով լի դրժվարին պատմության որևիցե, թեկուզ կարճատև, բայց լուսավոր էջը:

Մեծագույնը այդ լուսավոր էջերից մեր բազմաշարքար ժողովրդի ողջ պատմության ընթացքում բացվեց 1920 թվականին, երբ մեծ Հոկտեմբերի հզոր ճառագայթները ջերմացրին նաև հայկական լեռնաշխարհը: Վերջնական բնաջնման ահալոր վիհի եզ-

րին կանգնած հայ ժողովուրդը վաղուց կորցրած իր պետականությունը նոր հիմունքներով վերահաստատելով, գոյատևելու ու վերջուտին բարգավաճելու իրավունք նվաճեց:

Սովետական Հայաստանի տնտեսական ու մշակութային աննախընթաց նվաճումների մեջ նշանակալից են քաղաքաշինության ու ճարտարապետության ասարեզգնեցում ձեռք բերված նվաճումները: Հայկական սովետական ճարտարապետությունը դարձավ վերածնված հայ ժողովրդի բուն ծաղկումն ապրող նյութական ու հոգևոր մշակույթի անբաժանելի մասը: Այն ամբողջությամբ ի սպաս դրվեց ժողովրդի կյանքի պայմանների բարելավման մեծ և սրբազան գործին, ձեռք բերեց իրոք համաժողովրդական նշանակություն:


Սովետահայ ճարտարապետության զարգացումը, որ հայ ժողովրդի ճարտարապետական հարուստ ավանդների ողջ պատմության ընթացքում մի բացառիկ փուլ է հանդիսանում, տեղի ունեցավ հանրապետության քաղաքների ու բնակավայրերի, առաջին հերթին նրա մայրաքաղաքի արմատական վերակառուցման աշխատանքների բովանդակում:

Սովետական Հայաստանի կառավարությունը, երբ դեռևս լիովին չէին բուժված Առաջին համաշխարհային պատերազմի ու քաղաքացիական կռիվների հետևանքով հասցված ծանր վերքերը՝ որրությունը, սո-



վը, համաճարակ հիվանդությունները, տընտեսական քայքայումը և այլն, պատշաճ մտահոգություն ցուցաբերեց Երևանի ապագա զարգացման նկատմամբ՝ 1923 թվականին պատվիրելով բազմահմուտ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանին՝ կազմելու նրա գլխավոր հատակագիծը: 1924 թվականին կառավարության կողմից հաստատված այդ հատակագիծը, որը կազմված էր 150 հազար բնակչության համար, հանդիսացավ

որոշակի հատկանիշները, բնակլիմայական պայմանները և ազգաբնակչության կյանքի նպատակով պայմաններ ստեղծելու բոլոր հնարավորությունները: Քաղաքի ողջ տարածությունը պարզորոշ բաժանված էր բաղկացուցիչ մասերի՝ բնակելի թաղամասերի, հասարակական կենտրոնների, արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխման նպատակահարմար շրջանների, կանաչ տարածությունների և այլն: Մայրուղիների



Երևան. Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի շենքը (Ճարտ.՝ Ալ. Թամանյան), դիմացը՝ «Կարապի լիճ»-ը (Ճարտ.՝ Գ. Մուշեղյան)

մայրաքաղաքի վերակառուցման ծրագիր ու հիմք ծառայեց այն քաղաքաշինական աշխատանքների համար, որոնք ծավալվեցին քառանկյան և երեսնական թվականներին: Ու թեև հետագա տարիներին քաղաքի բոլոր զարգացման կապակցությամբ Երևանի գըլխավոր հատակագիծը մի քանի անգամ վերակազմվեց, սակայն Թամանյանի հատակագծի մտահոգումները հիմնականում պահպանվեցին ու զարգացում ստացան:

Թամանյանի կազմած Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, որ սովետական քաղաքաշինության անդրանիկ ձեռնարկումներից է, հենվում է քաղաքների վերակառուցման առաջավոր տեղություն վրա: Նրանում համակողմանիորեն հաշվի են առնված պատմականորեն առաջացած բնակավայրի

ու փողոցների ցանցը հնարավորություն է ստեղծում հարմար կապ ստեղծել քաղաքի բոլոր մասերի միջև:

Դեռևս Թամանյանի կենդանության ժամանակ (վախճանվել է 1936 թվականին) նրա անմիջական ղեկավարությամբ իրականացվեց փողոցների ցանցի մի մասը և կարևոր հասարակական, վարչական, ուսումնական, ինչպես նաև բնակելի շենքերով «ամրացվեցին» այդ ցանցի հիմնական հանգույցները (համալսարանական թաղամասը, մասնակիորեն Լենինի և Թահմանյանի հրապարակները, առանձին մայրուղիները):

Ա. Թամանյանը ոչ միայն հմուտ քաղաքաշինարար էր, այլև բազմաուղղանոց ճարտարապետ: Իր առանձին մոնումենտալ շենքերով, նա նոր Երևանի նորոգ ճարտարա-





Երևան. Լենինի հրապարակի մի մասը՝ Հայաստանի պատմության թանգարանի շենքով (Վերակառուցման նախագծի հեղինակներ՝ ճարտ. Մ. Կրիգորյան, Է. Սարապյան)

պետության հիմքերը դրեց, վճռական ազդեցություն ունեցավ սովետահայ ճարտարապետության ոճական ուղղության վրա: Այդ առումով նա պետք է համարվի սովետահայ ճարտարապետության հիմնադիրը և ամենանշանավոր վարպետներից մեկը:

Բազմաթիվ են այն շենքերի թիվը, որոնք կառուցվել են Երևանում Ալ. Թամանյանի նախագծերով: Սակայն դրանցից երեքն է, որ առանձնապես ցայտուն կերպով արտահայտում են նրա ստեղծագործական ուղղության էությունը, ազգային ճարտարապետության ավանդների շարունակման ու զարգացման նրա մեծագույն ջանքերը: Առաջնեկը այդ տեսակետից հանդիսանում է Հրազդանի գեղատեսիլ կիրճում 1926 թվականին կառուցված Երևանի ստաշին հիդրոկայանի շենքը, որն իր միասնական ծավալով, մոնումենտալ ձևերով, նյութով ու գույնով զարմանալիորեն համահնչյուն է տեղանքին:

Մյուս կարևոր շենքը, դա հանդիսատեսային նպատակին ծառայող ժողովրդական տունն է (հետագայում—Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի ու Հայֆիլհարմոնիայի շենքը), որը Թամանյանի քաղաքաշինական մտահղացմամբ պետք է հանդիսանար Երևանի թատրոնական հրապարակի գերիշխողը և իրենով կազմա-

վորեր ընդարձակ մի տարածություն: Այս խոշոր հանդիսատեսային շենքը (որի համար հեղինակը 1935 թվականին Փարիզի միջազգային ցուցահանդեսում մեծ մրցանակի է արժանացել), աչքի է ընկնում իր սկզբունքային նոր, թատրոնական ավանդական շենքերից միանգամայն տարբեր հատակագծաին ու տարածական լուծումներով: Նրանում բազմաանոտ հեղինակը համարձակ փորձ է արել մեկ շենքի մեջ հանդիսատեսային երկու դահլիճներ տեղավորել, դրանք տպասարկելով բեմական ընդհանուր տնտեսությամբ:

Թեև շենքի կառուցման ընթացքում որոշ փոփոխություններ մտցվեցին նրանում, սակայն հիմնականում այն իրականացվեց Թամանյանի մտահղացման համաձայն, և ներկայումս Երևանի համալսնապատկերում մըշտապես իշխում է իր հաղթ ու հետաքրքիր ծավալներով:

Թամանյանի ստեղծագործության գլուխգործոցը պետք է համարվի Հայկական Սովետական Հանրապետության կառավարության տունը՝ Լենինի հրապարակում, որի համար 1942 թ. նրան հետմահու պետական մրցանակ շնորհվեց: Զբաղեցնելով մարաքաղաքի գլխավոր վարչական կենտրոնի հարավ-արևելյան կողմում մի ողջ թաղա-





Երևան. Կենտրոնական ծածկած շուկայի շենքը  
(ճարտ.՝ Գր. Աղաբաբյան, ինժ.՝ Հ. Առաքելյան)

մաս, կառավարական տունը իր դրվածքով, հրապարակի նկատմամբ կողմնորոշված գլխավոր ու երկրորդական ճակատներով, նրանց բարձրությամբ և ճարտարապետական մշակմամբ, շինանկյութով և այլն, կանխորոշեց ապագա հրապարակի ճարտարապետական լուծումը ու հանդիսացավ այդ ներդաշնակ անասմբլի անկյունաքարը:

Խոշոր հասարակական շենքերի նախագծման և կառուցման հետ միասին Հայաստանում դեռևս 20-ական թվականների վերջերից զարկ տրվեց նաև բնակարանային շինարարությանը, որը առանձնապես ծավալվեց 30-ական թվականներին:

Տեղի բնա-կլիմայական պայմաններին հարմարեցված ժողովրդական բնակարանի ձևերի ուշադիր ուսումնասիրության ու դրանց լավագույն հատկանիշների ստեղծագործական օգտագործման միջոցով, Հայաստանի ճարտարապետները կարողացան ստեղծել բնակարանի նոր և առաջադիմական տիպեր, որոնցում պահպանվել ու զարգացվել են ավանդական բնակարանի անհրաժեշտ մասեր: Այդ ճանապարհով մշակվեց քաղաքատիպ 3—4 հարկանի բնակելի տունը, բնակարանի նպատակահարմար հատակագծմամբ, օժտված բակի պատշգամբով,

որը հարավի պայմաններում բնակարանի անհրաժեշտ մասն է կազմում:


Մասսայական շինարարության շենքերի և ստաշին հերթին բնակարանների նախագրծման ու կառուցման գործում զգալի է ճարտարապետների ավագ սերնդի ներկայացուցիչներ Ն. Բունիաթյանի և Բ. Արագյանի («Բնակշինկոպ» ընկերության բնակելի տները), իսկ հետագայում նաև այն ժամանակ դեռ նոր ստեղծագործական ասպարեզ մտած Կ. Հալաբյանի, Ա. Ահարոնյանի, Մ. Գրիգորյանի, Տ. Երկանյանի, Մ. Մազմանյանի, Հ. Մարգարյանի Գ. Քոչարի, Ս. Սաֆարյանի և ուրիշների ներդրումը: 1930 թ. ճարտարապետներ Հ. Մարգարյանի և Ա. Ահարոնյանի կողմից մշակվում են բնակարանների տիպեր, որոնցով կառուցվում են բնակելի շենքեր Երևանում և Ալավերդում: Միատիպ շենքերից բնակելի թաղամաս ստեղծելու առաջին փորձերը թեև վերաբերում են քաանական թվականներին (Զեթ-օճառ գործարանի բանվորների համար կառուցված բնակելի տները), սակայն երեսնական թվականների սկզբում կառուցապատման այդ առաջադիմական եղանակը ավելի լայն մասշտաբով կիրառություն է գտնում Ս. Կիրովի անվան բանվորական ա-



վանի շինարարության ժամանակ, որն իրականացվում է ճարտարապետներ Մ. Մազմանյանի և Գ. Քոչարի մշակած նախագծերով: Միատիպ բնակելի տներով (հեղ.՝ Ս. Չխայրյան) մասամբ կառուցապատվում է նաև Լեհինական քաղաքը, որտեղ 1926 թվականի ապերիջ երկրաշարժից հետո նույնպես զգալիորեն ծավալվում է բնակարանային շինարարությունը:

Մասնազանկան շինարարության մյուս կա-

նշանավորվում է սովետահայ ճարտարապետության առանձնակի վերելքով: Ավագ և երիտասարդ սերնդի ճարտարապետների միասնական ջանքերով, ստեղծագործական ձգտումների ընդհանրության հիման վրա, որի նշանաբանն էր ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական ճարտարապետության ստեղծումը, նախագծվում և կառուցվում են մի շարք կարևոր հասարակական շենքեր, որոնք հաջողությամբ արտա-



Երևան. «Անի» հյուրանոցի մակերթ  
(ճարտ. ճարտ.՝ Զ. Գարրինյան, Է. Սաֆարյան)

բեկոր բնագավառը հանդիսացան դպրոցներն ու մանկական հիմնարկները: Հայաստանի համարյա բոլոր քաղաքներում և հատկապես Երևանում կառուցվեցին բազմաթիվ դպրոցների, մանկապարտեզների և մանկամտարների հարմարավետ շենքեր, որոնցում անհրաժեշտ հոգատարություն է ցուցաբերված ոչ միայն ուսումնական պարսպամունքները լավագույն կերպով կազմակերպելու, այլև նրանց ներքին ու արտաքին ճարտարապետական արտահայտչականության նկատմամբ: Այդ տեսակետից առանձնապես հաջողված պետք է համարել ճարտարապետներ Զ. Բախշինյանի, Մ. Գրիգորյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Տեր-Ավետիսյանի, Ա. Տեր-Կարապետյանի և Խ. Ռուստոմբեկյանի նախագծերով կառուցված դպրոցական շենքերը Երևանում, Լեհինականում և Կիրովականում:

Երեսնական թվականների երկրորդ կեսը

հայտնում են ազգային ավանդների ստեղծագործական օգտագործման ուղղությամբ նրանց հեղինակների որոշակի ջանքերը:


Այդ տարիներին ստավել հաջողված գործերից են՝ Երևանի կենտրոնական ունիվերսալ խանութը (հեղինակներ՝ Ա. Ահարոնյան, Մ. Մազմանյան, Հ. Մարգարյան և Գ. Քոչար), «Մոսկվա» կինոթատրոնի շենքը (Տ. Երկանյան և Գ. Քոչար), «Երևան» հյուրանոցի շենքը (Ն. Բունիաթյան), բժշկական և գորղատնտեսական ինստիտուտների շենքերը (Ս. Սաֆարյան), «Արարատ» տրեստի գինու մատանները (Ռ. Իսրայելյան և Գ. Քոչար) և Հայկ. ՍՍՀ տաղավարը համաթիթենական գյուղատնտեսական ցուցահանդեսում՝ Մոսկվայում (Կ. Հալաբյան և Ս. Սաֆարյան): Թվարկվածներին պետք է ավելացնել նաև Այ. Թամանյանի նախագրծերով կառուցված անասնապահական-անասնաբուժական և պոլիտեխնիկական ինս-



տիտուսների, հանրային գրադարանի, աստղադիտարանի ու բուժական նպատակների ծառայող մի քանի շենքերը:

Պետք է նշել, որ հիշատակված շենքերի ճարտարապետական բարձր հատկանիշնե-

կազմվեցին Լեոնիականի (Ռեդիականեր՝ Մ. Մազմանյան, Փ. Մանուկյան և Գ. Մորգա. հետազայում նաև Հ. Դալիջյան և Ա. Կարապետյան), Կիրովյանի (Ն. Զարգարյան, Ա. Մինասյան), Էջմիածնի (Ս. Մա-



Կիրովյան. Մի տեսարան քաղաքից

րը մինևույն ժամանակ մեծապես նպաստեցին նրանցով կառուցապատված փողոցների կամ հրապարակների հնչեղությանը, այսինքն քաղաքաշինական տեսակետից բարերար նշանակություն ունեցան:

Նորից անդրադառնալով քաղաքների ու բնակավայրերի վերակառուցման, կառուցապատման ու բարեկարգման հարցերին, պետք է նշել, որ այդ տեսակետից Երևանից բացի պատշաճ ուշադրության արժանացան նաև հանրապետության մյուս քաղաքները, ըստ որում նրանց համար նույնպես, ինչպես Երևանի համար, զարգացման հիմնական սզղակը և քաղաքաստեղծ գործունեների թելադրողը հանդիսացավ սրդյունաբերության զարգացումը:

նույն) և մի շարք այլ բնակավայրերի գլխավոր հատակագծերը, որոնցով և նրանցում իրականացվեցին վերակառուցման ու կառուցապատման աշխատանքները: Ծոշափելի տեղաշարժեր սկսվեցին նաև Հայաստանի գյուղական բնակավայրերում, որոնք անցյալում մեծամասամբ կառուցապատված էին տարերայնորեն, չունեին քաղաքաշինական որոշակի կերպարանք, բարեկարգման տարրական մակարդակ: Արտադրության հասարակական բնույթը և այդ կապակցությամբ համայնական տնտեսական հնարավորությունների ամրապնդումը, նոր խնդիրներ առաջադրեցին գյուղական բնակավայրերի զարգացման, լուսավոր կյանքի ձգտող գյուղական աշխատավորության



կյանքի համակողմանի քարեկաման համար: Այդ սկզբունքով էին ղեկավարվում Հայաստանի ճարտարապետները՝ կազմելով մի շարք գյուղական վայրերի հատակագր-

րի միավորումը մեկ ընդհանուր ստեղծագործական կազմակերպության՝ Հայաստանի ճարտարապետների միության մեջ (հիմնադրված 1934 թվականին):



Էջմիածին. Կոլտուրայի տունը

(Ճարտ.՝ Ս. Մանուկյան)

ները: Իրանցից հիշատակենք Սարգսյանների (Ս. Թամանյան), Փարաքարի (Մ. Մազմանյան), Վերին Արտաշատի (Գ. Բոչար և Տ. Մարության), Արմավիրի (Ս. Աստյան) հատակագծերը:

Նախապատերազմյան տարիներին վերը շարադրած նվաճումների ապահովման գործում մեծ էր սովետահայ ճարտարապետների ներդրումը: Եթե քանակական կանոններին դրանց թիվը մատնեին՝ վրա կարելի էր հաշվել, ապա շնորհիվ ճարտարապետական դպրոցի ստեղծմանը (1923 թվականից Երեւանի պետական համալսարանում, իսկ 1930 թվականից՝ Երևանի պալիտեխնիկական ինստիտուտում) հանրապետությունը ապահովվեց տեղական պայմաններին ու ճարտարապետական-շինարարական ավանդներին քաջաձանձոք ճարտարապետների մի երիտասարդ սերնդով, որը և այժպ ու փորձառու ճարտարապետների ընդհանուր ղեկավարությամբ իրեն կարող ուներ վրա վերցրեց սովետահայ ճարտարապետության զարգացման դժվարին, բայց պատվաբեր խնդիրը: Նրա ջանքերը նպատակալաց հունով առաջնորդելու գործում կարևոր դեր խաղաց նաև սովետահայ ճարտարապետները:

Ինչպես ամբողջ սովետական երկրում, այնպես էլ Սովետական Հայաստանում ծավալված բուռն շինարարությունը զգալիորեն նվազեց 1941 թվականին՝ Հարբեճական մեծ պատերազմի կապակցությամբ: Պատերազմական տարիների ընթացքում, շինարարության ծավալի զգալի կրճատման պայմաններում, անուամենայնիվ սովետահայ ճարտարապետների ստեղծագործական միտքը չդադարեց նվաճումներ ունենալ: Արդյունաբերական և ուսումնական նշանակություն ունեցող շենքերի ու կառուցվածքների նախագծման հետ միասին, աչքի ընկնող տեղ գրավեց սովետական հարբեճափրության մարմնավորումը ճարտարապետության միջոցներով: Այդ կարևոր թեման առանձնապես ցայտուն կերպով արտահայտվեց հարբեճական պատերազմում զոհված հայ մարտիկների հիշատակը հավերժացնելու նպատակով կառուցված աղբյուր-հուշարձաններում, տեղադրված քաղաքներում և գյուղական բնակավայրերում, խնուղային ճանապարհների ուղղությամբ և այլուր: Զուրք, որ ժողովրդի սխալման կատարողների



կյանք և հավերժություն էր խորհրդանշում, նորաստեղծ աղբյուր-հուշարձաններում գաղափարական նոր բովանդակության ծառայեց: Այդ գողտրիկ աղբյուր-հուշարձանների լավագույն օրինակներում (կառուցված Ռ.

Հայրենական պատերազմի տարիներին նախագծվեցին և մասամբ սկսեցին իրականացվել մի քանի խոշոր հասարակական շենքեր և կառուցվածքներ: Դրանցից հիշատակելի են Մատենադարանի շենքը (Մ.



Երևան. Մատենի Դավթի արձանը երկաթուղային կայարանամերձ հրապարակում (Քանդ.՝ Ե. Քոչար, կայարանի շենքը՝ ճարտ.՝ Է. Տիգրանյան)

Իսրայելյանի, Տ. Մարությանի, Գևորգ Թամանյանի նախագծերով), ներդաշնակորեն կապված բնական միջավայրի հետ, կարելի է տեսնել, թե ինչպես նրանց հեղինակները զարգացման նոր մակարդակի են հասցրել հայ ժողովրդի հարուստ ավանդները ճարտարապետական փոքր ձևերի և քարի գեղարվեստական մշակման ասպարեզում:

Հայրենասիրության թեմայի մարմնավորման մյուս բնագավառը հանդիսացավ Երեվանում կառուցվելիք հաղթական մարտի մրցանակաբաշխությունը, որի մասնակիցներից շատերը իրենց ներկայացրած նախագծերում ձգտել էին հաղթանակի պանծացման գաղափարը մարմնավորել մոնումենտալ ու ազգային յուրահատկությամբ բնորոշ հորինվածքներում:

Գրիգորյան, Բյուրականի աստղադիտարանի համակառուցվածքը (Ս. Սաֆարյան), «Հաղթանակ» կամուրջը (հեղ.՝ ինժ. Ս. Հովնաճյան, ճարտ. ձևավորում Ա. Մամիջանյանի և Ա. Ասատրյանի): Պատերազմի վերջին տարիներին Երևանում և մյուս քաղաքներում վերակառուցվեցին ընդհատված քաղաքաշինական աշխատանքները: Այդ տարիներին սկսեց բացվել քաղաքի կենտրոնը Արաբկիրի հետ միացնող Բարեկամության փողոցը և այլն: Բնվող ժամանակաշրջանի կարևոր միջոցառումներից պետք է համարել ճարտարապետության պետական օրգանի՝ Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր ճարտարապետական գործերի վարչության կառուցումը, որը մեծապես նպաստեց



հետպատերազմյան շրջանի շինարարության նախապատրաստմանը:

Մասնավորապես չափազանց գնահատելի են Հայաստանի փոքր քաղաքների և շրջանային կենտրոնների գլխավոր հատակագր-

րի ընթացքում կիրառած քաղաքաշինական միջոցառումների էֆեկտը:

Այս տեսակետից առավել բնորոշ օրինակարող է ծառայել Լենինի անունը կրող հրապարակը Երևանում, որի տարածական լու-



Ջերմուկ. Ընկերարան  
(Ճարտ.՝ Գ. Թամանյան)

ծերի մշակման աշխատանքները, որոնք ըսկըսվեցին այդ ժամանակ, շարունակվելով նաև հետպատերազմյան տարիներին:

\* \* \*

Ճաշխոտական Գերմանիայի դեմ պատերազմի հաղթական ավարտից հետո, սովետական երկիրը վերստին վերադարձավ խաղաղ աշխատանքի, բուժելու համար պատերազմի ծանր վերքերը, վերաշինելու ավերված քաղաքներն ու քնակալայրերը, վերականգնելու քայքայված տնտեսությունը:

Հայաստանում նորից սկսեցին զրնգալ քարտաշ վարպետների մուրները: Ողջ հանրապետությունը վերածվեց մի հսկայական շինարարական հրապարակի: Ծինարարության ծավալը զգալիորեն գերազանցում էր նախապատերազմյան տարիներին ու իրականացվում ոչ թե հատ-հատ շենքերով, այլ դրանց խմբերով: Սա հնարավորություն էր տալիս ամբողջացնել պատերազմից սուսչ սկսած առանձին հրապարակների, փողոցների և թաղամասերի կառուցապատումը, ավելի շոշափելի դարձնելու համար տարիներ

ծումը, ինչպես նշվեց վերևում, մտահոլացված էր Ալ. Թամանյանի կողմից և արդեն «ամրացված» Հայկ. ՍՍՀ կառավարության տան տեղադրությամբ: Հրապարակի լրիվ կառուցապատումը իրականացվեց հետպատերազմյան տասը տարիների ընթացքում ու հիմնականում ավարտվեց 1956 թվականին:

Մի խումբ շնորհալի ճարտարապետներ մասնակցելով հրապարակի կառուցապատման պատասխանատու և պատվաբեր գործին, կարողացան այն պսակել հաջողությամբ՝ հավատարիմ մնալով նրա տարածական ու ճարտարապետական միասնականության գաղափարին:

Հայկական ՍՍՀ կառավարության տունը, լուծված հանդիսավոր ու մոնումենտալ, ազգային ճարտարապետության հարազատ, ժողովրդի գեղարվեստական ըմբռնումներին համապատասխանող և նրա պատմական վերածնությունը մարմնավորող ձևերով, իր մասշտաբով, բազմազան ու հարուստ դրվագման միջոցներով, դարձավ մեկնակետը հրապարակի շուրջը տեղադրված մյուս բո-



լոր շենքերի համար:

Նրա դիմացի վարչական շենքը (հեղինակ՝ Ս. Սաֆարյան, մասնակցությամբ Վ. Արևշատյանի և Ռ. Կրալեյչանի), նախագծված կառավարության տանը ներդաշնակելու նպատակադրությամբ, իրենով ընդգծեց հրապարակի հյուս.-արևմտյան կողմի պարագիծը, տարածական հավասարակշռությունն ստեղծելով նրա երկու կողմերի միջև:



Արցնի առողջարան. Լողարանների շենքի բակը (Ճարտ. ճարտ.՝ Հ. Մարգարյան, Ն. Բաժբեուկ—Մելիքյան)

Այդ հանգամանքը ավելի ևս ընդգծվեց պատմական թանգարանի շենքի (նախկինում՝ դպրոցի շենքի) հրապարակի կողմը դարձած ճակատի վերակառուցման հետևանքով (հեղինակներ՝ Մ. Գրիգորյան և Է. Սարապյան):

Նույն հեղինակների նախագծերով հրապարակի հարավ-արևմտյան մասում իրականացվեցին «Արմենիա» հյուրանոցի և արհմիությունների խորհրդի շենքերը, ինչպես և կապի մինիստրության շենքի վերակառուցումը:

Հրապարակի գաղափարական բովանդակությունը մարմնավորեց Լենինի հոյակապ արձանը, կանգնեցված դեռևս 1940 թվականին հարավ-արևմտյան մասում (քանդակագործ Ս. Մերկուրով, ճարտարապետներ Լ. Վարդանյան և Ն. Փարեմուզյան): Հրապարակի հյուսիս-արևելյան ուղղանկյունի մասում, պատմության թանգարանի առաջ տեղադրված ընդարձակ ջրավազանը (Մ. Գրիգորյան), բարենպաստ դարձրեց հրապարակի միկրոկլիման, մտցրեց հաճելի թարմությունն ու մտերմիկ դարձրեց նրա շրջապատը:

Լենինի հրապարակի ներդաշնակ ճարտարապետական անսամբլը, իր նշված հատ-

կանիշների շնորհիվ, իրավամբ համարվեց մի նշանակալից ներդրում սովետական քաղաքաշինության նվաճումների մեջ:

Հետպատերազմյան շրջանի սովետահայ ճարտարապետությունը նշանավորվեց նաև մի շարք այլ հաջողություններով ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության մյուս քաղաքներում՝ Լենինականում, Կիրովականում, Ալավերդում և այլն:

Այդ տեսակետից առաջնակարգ տեղերից մեկը պատկանում է Երևանի կենտրոնական ծածկված շուկայի շենքին, իրականացված ճարտ. Գ. Աղաբաբյանի և ինժ. Հ. Առաքելյանի համատեղ ջանքերով: Այս հոյակապ կառուցվածքի կարևորագույն հատկանիշը ճարտարապետության և կոնստրուկցիաների փոխադարձ համահնչյունությունն է, մեկի սերտ պայմանավորվածությունը մյուսով, որպիսին առանձնապես ցայտուն կերպով արտահայտվել է առևտրական ընդարձակ դահլիճի ներքին տարածության լուծման մեջ: Երեսուն մետր թոփչք ունեցող երկաթբետոնյա բարակ թաղը հենված է նորը կանարների վրա, որոնք իրենց ուղիղ միկ դասավորությամբ ու ձևերով առանձնապես նպաստում են ներքին տարածության արտահայտչականությանը: Այս խոշոր հաստատական շենքի ճարտարապետության մեջ հեղինակների ավելի թարմ ու ժամանակակից մտնեցում են հանդես բերել հանդեպ ազգային ճարտարապետական ավանդների: Ծենքի ազգային ինքնատիպությունը արտահայտված է նրա տարբեր դրվագներում և առանձնապես ցայտուն կերպով՝ գլխավոր ճակատի հսկայական կամարային բացվածքի մեջ ամփոփած մետաղական ցանցաճաղով՝ հորինված հայկական զարդարվեստի լավագույն նմուշների օգտագործմամբ:

Մյուս նշանակալից հասարակական շենքը՝ Մատենադարանն է, հայ ժողովրդի գրավոր մշակույթի գանձերի՝ մագաղաթյա մատյանների ապահով հանգրվանը: Նրա հեղինակ՝ ճարտ. Մ. Գրիգորյանի մտահղացմամբ, շենքը տեղավորված է Լենինի պողոտայի վերջում՝ բազալտյա ժայռերի տակին: Իեպի Մատենադարան տանում են լայն և հանդիսավոր աստիճանները:

Ծենքի խորանարդանման միասնական ծավալը, կերտված սրբատաշ բազալտից, իր գլխավոր ճակատով ուղղված է դեպի պողոտան, ու բոլոր կետերից երևում է: Արտաքին և ներքին ճարտարապետությունը լուծված արտահայտչության ազգային, փոքր ինչ հնամենի միջոցներով, զուգակցելով մոնումենտալ քանդակների, որմնակարչության ու խճանկարչության սինթե-



տիկ միջոցների հետ, ստեղծում են հարազատ միջավայր շենքի կարևոր բովանդակության համար:

Մայրաքաղաքի խոշոր հասարակական շենքերի թվում արժանի տեղ է գրավում նաև Հայկական ՍՍՀ գիտությունների ակադե-

ինքնատիպ, հաղթանակը պանծացնող կառուցվածքում, լուծված ուղիաձիգ մի ծավալով ու դրվագված զարդահարուստ միջոցներով, մեծ վարպետությամբ է մարմնավորված գաղափարական բովանդակությունը: Խոլ պատերի մեջ անփոփված, բայց վերևից



Գլուխուշ. Հիդրոէլեկտրակայանի շենքը

(ճարտ.՝ Տ. Մարության)

միայի գլխավոր շենքը (Ս. Սաֆարյան), տեղադրված Բարեկամության փողոցում և իր առանցքով ուղիահայաց նրա ուղղությամբ: Շենքն իր սիմետրիկ հորինվածքով, թեև տեղադրված երկարավուն ծավալներով (Ս. Սաֆարյան և Մ. Մանվելյան) հանդերձ, որոնք հատկացված են գիտա-հետազոտական տարբեր իննստիտուտների, մի ներդաշնակ խումբ են կազմում:

Մրա դիմաց, փողոցից զգալիորեն հետ, մի բարձրունքի վրա տեղադրված է ևս խոշոր մի վարչական շենք՝ ԿԿ Կենտկոմի շենքը (Մ. Գրիգորյան), որն իր ճարտարապետական արժանիքների համար պետական մրցանակ է նվաճել:

Նույնպիսի բարձր գեամատման՝ պետական մրցանակի է արժանացել նաև Կանաքեռի սարալանջի շրջին տեղադրված «Հաղթանակ» հուշարձանը (քանդակագործ Ս. Մերկուրով, ճարտ. Ռ. Իսրայելյան): Այս

լուսավորվող բազմաթիվ դանլիճները հատկացվելու են Հարեհական մեծ պատերազմում հայ ժողովրդի և նրա հերոսական զավակների սիրագործությունների պատմությանը:

Նույն ժամանակաշրջանի խոշոր հասարակական և ուսումնական շենքերի թվին են պատկանում երկաթուղային կայարանի և պետական համալսարանի ուսումնական նոր շենքերը (երկուսն էլ նախագծված է Տիգրանյանի կողմից) և պոլիտեխնիկական ինստիտուտի շենքը (Ա. Մամիջանյան):

Դրանց հետ միասին, Երևանում ստեղծվեցին ինժեներական մի շարք նոր կառուցվածքներ՝ կամուրջներ ու ջրանցույցներ: Հրազդանի մեծ կամուրջը (ինժ. ինժ. Ալավանսկի, Վ. Փինաշյան, ճարտ. Գ. Աղաբաբյան) իր լայնաթիղջ կամարային կառուցվածքով գոտկելով գեղատեսիլ կիրճը, տրանսպորտային հարմար կապ է ստեղծում



քուն քաղաքի և Աջափնյակի միջև: Իր ձեռքով ու տեղանքի հետ ներդաշնակվելու տեսակետից հետաքրքիր ինժեներական կառուցվածք է ստացվել նաև նույն կիրճում տեղադրված ջրանցույցը (ինժ. Գ. Յաղջյան, ճարտ. Ռ. Իսրայելյան):

Հանրապետության մյուս քաղաքների հասարակական կենտրոնների կառուցապատման վրա նկատելի է Երևանի Լենինի հրապարակի բարերար ազդեցությունը: Այդ տեսակետից չափազանց բնորոշ է Կիրովի հրապարակը Կիրովականում՝ իրականացված ճարտարապետներ Փ. Մանուկյանի և Է. Պապյանի մտահղացման համաձայն: Այստեղ մի շարք հասարակական շենքեր՝ քաղաքային սովետի (Հ. Մարգարյան), կուսակցության քաղաքին կոմիտեի (Զ. Բախշինյան), «Գուգարք» հյուրանոցի (Հ. Մարգարյան, Բ. Արզումանյան), տեղադրված ուղղանկյուն հրապարակի պարագծով, հանդիպակաց կողմի բնակելի շենքերի (Հ. Մարգարյան, Բ. Արզումանյան) մասշտաբով, ճարտարապետությամբ և շինանյութի գույնով միանգամայն ներդաշնակ են: Ջրուսայգու վերջում, որը հյուսիսային կողմից բացվում է դեպի հրապարակ, կանգնեցված է Ս. Կիրովի արձանը (Ս. Մարգարյան): Վերջին տարիների ընթացքում հրապարակում իրականացրած բարեկարգման աշխատանքների (Վ. Սահակյան) հետևանքով այն դարձել է ավելի մտերմիկ:

Նույնպիսի սկզբունքներով կառուցապատվել է Լենինի հրապարակը Լենինականում, որը հանդիսանում է տրանսպորտային աշխույժ շարժման հանգույց: Քառակուսի ընդարձակ հրապարակը պարագծով կառուցապատված է վարչական, առևտրական և բնակելի տներով: Նրա կենտրոնում կանաչով շրջապատված պատվանդանի վրա խոչանում է Լենինի արձանը, որը սիրով կերտել է իր հայրենի քաղաքի համար սովետական նշանավոր քանդակագործ Ս. Մերկուրովը:

Ճարտարապետական կազմակերպված ու հետաքրքիր տարածություններ ստեղծվել են Ալավերդում (Հ. Իսաբեկյան), Իջևանում (Պ. Թումանյան), Էջմիածնում (Ս. Մանուկյան), Աշտարակում (Յու. Յարայան) և մի շարք ուրիշ փոքր քաղաքներում և շրջանային կենտրոններում, ինչպես նաև նոր ստեղծված բանվորական ավաններում, որոնցից հիշատակության արժանի է Թումանյան բանվորական ավանը (Ս. Մանուկյան):

Հետպատերազմյան տարիներին զգալի տեղաշարժեր եղան նաև Հայաստանի գյուղական բնակավայրերում: Համայնական տնտեսության տարեց-տարի աճող եկամուտների շնորհիվ հնարավոր դարձավ գյու-

ղերում ծավալել հասարակական շենքերի՝ ակումբների, դպրոցների, բաղնիքների, խանութների ու արտադրական կառուցվածքների՝ կովանոցների, ոչխարանոցների, խոզանոցների, շորանոցների և այլ շինարարություն: Դրանց զուգընթաց գյուղական աշխատավորությունը ամենուրեք, նախնականը Արարատյան դաշտի գյուղերում, որտեղ տնտեսական նախադրյալներն առավել բարենպաստ են, կառուցեցին տասնյակ հազարավոր նոր բնակարաններ, որոնք պահպանելով հանդերձ գեղջկական բնակարանի որոշ ավանդական հատկանիշներ, միևնույն ժամանակ օժտված են հանգստավետ կյանք ստեղծելու արդիական հարմարություններով: Գյուղական բնակավայրերում ծայր առած բուն շինարարությանը նպաստելու համար կազմվեցին արտադրական, կուլտուր-կենցաղային, բնակելի շենքերի ամհատական և տիպային նախագծեր, որոնք լայն կիրառություն գտան Հայաստանի տարբեր շրջաններում: Այդ կարևոր գործում նըշանակալից են ճարտարապետներ Գ. Թամանյանի, Ռ. Իսրայելյանի, Ռ. Ալավերդյանի, Բ. Սմբատյանի, Ա. Խոլոյանի, Հ. Կիրակոսյանի, Վ. Կարապետյանի և շատ ուրիշների ներդրումները:

Գյուղական բնակավայրերի բարեկարգմանը և պլանային զարգացմանը մեծապես նպաստեց նրանց գլխավոր նախագծերի կազմումը, որի ասպարեզում բեղմնավոր կերպով աշխատում են Պ. Խոյեցյանը, Ս. Կարապետյանը, Հ. Ավանիսյանը և ուրիշներ:

Սովետահայ ճարտարապետության մի առանձին բնագավառ կազմավորվեց հանրապետության առողջարաններ՝ Արզնին, Ջերմուկը, Դիլիջանը, որոնց կառուցապատումը իրականացվում է գլխավոր հատկագծերի համաձայն: Ջերմուկինը՝ մշակած Պ. Մարյանի և Փ. Մանուկյանի, Արզնինը՝ Հ. Իսաբեկյանի, Դիլիջանինը՝ Հ. Իսաբեկյանի և Ռ. Գրիգորյանի կողմից:

Ի թիվս լավագույն շենքերի, հիշատակության արժանի են Արզնու առողջարանի (Ս. Սաֆարյան) և լողարանների (Հ. Մարգարյան և Հ. Բաժբեուկ-Մելիքյան), Ջերմուկի առողջարանի և ըմպելաարահի (Գ. Թամանյան), հյուրանոցի (Հ. Հակոբյան) և մի այլ առողջարանի (Է. Տիգրանյան) շենքերը, ինչպես նաև Դիլիջանի առողջարանի շենքը (Զ. Բախշինյան):

Համատոտակի ներկայացնելով հետպատերազմյան առաջին տասնամյակի ընթացքում սովետահայ ճարտարապետության և քաղաքաշինության հիմնական նվաճումները, անհրաժեշտ է նաև նշել, որ այդ ժամանակաշրջանը գերծ չի եղել նաև թերություն-



ներից: Դրանք գլխավորապես արտահայտվել են պնդամտության, մասսայական շենքերին կեղծ մոնումենտալություն հարորդելու, ազգային ճարտարապետական ավանդների անմիջական, ոչ ստեղծագործական օգտագործման, շենքերի հարմարավետության, նրանց տնտեսական ցուցանիշների նկատմամբ պակաս չափով ուշադիր լինելու մեջ և այլն: Դրա հետևանքով էլ կառուցվում էին պալատանման բնակելի տներ, դպրոցներ, հիվանդանոցներ՝ փարթամ ու չափածառաբանված հարդարանքներով, սուսնց նկատի ունենալու, որ զարդարարության հետևանքով բարձրանում է շենքի արժեքը ու իշնում նրա ճարտարապետական արժանիքները:

1954—55 թվականից ամբողջ սովետական երկրում, նույն թիվում նաև Սովետական Հայաստանում սկսվում է ստեղծագործական արմատական վերակառուցում, վճռականապես հաղթահարելու համար վերջ երջված էական թերությունները: Պայքարը ավելորդությունների դեմ ճարտարապետության մեջ, նրա համակողմանի արդիականացումը, ճարտարապետական ստեղծագործության բնագավառում ստողջ սկզբունքների համարձակ արմատավորումը դառնում է հիմնական նշանաբան:

Միևնույն ժամանակ, արմատապես վերակառուցվում է նախագծման և շինարարության գործը: Մասսայական շինարարության մեջ սկսվում է հարմարավետ ու էկոնոմիկ տիպային նախագծերի լայն կիրառությունը, արմատավորվում կառուցման գործարանային մեթոդներ, ստեղծվում են դրանց անցնելու արտադրական-տեխնիկական նախապայմաններ (տնաշինական կոմբինատներ, հավաքովի երկաթբետոնի շինվածքների գործարաններ և այլն):

Ինչ խոսք, որ ընդհանուր առմամբ միանգամայն անհրաժեշտ ու իր էությունը սուսչափմական այս վերակառուցումը սովետական քաղաքաշինության և ճարտարապետության, գործնականում հեղաշրջող նշանակություն ունեցավ, վերափոխեց նրա տեխնիկա-տնտեսական ցուցանիշները, ճարտարապետական արտահայտչականության միջոցները:

Մեծ կարևորություն տրվեց բնակարանային շինարարության ծախսերի երկրում, նպատակադրվելով 10—12 տարիների ընթացքում հիմնականում բավարարել աշխատավորության բնակարանային պահանջումները: Բաղաբներին կից ազատ տարածությունների վրա (Երևանում՝ Աշափեյակ, Ն. Չեչոյան, Նորք, Արարատյան, Լեհիմականում՝ Անտառային, Կիրովյականում՝ Դիմացի, Ալավերդում՝ Սաղու-ձոր և այլն)

տիպային նախագծերով սկսվում են կառուցվել բնակելի զանգվածներ, հանգստավետ պայմաններ ստեղծելով հարյուր հազարավոր մարդկանց համար: Բնակելի նոր շքրջանների շինարարությունը հիմնականում կատարվում է կոմպլեքսային սկզբունքով, կիրառելով նրանց տարածությունների ինժեներական կահավորման (չքամատակարարում, կոյուղի, գազֆիկացում, ճանապարհներ և այլն) ու բարեկարգման անհրաժեշտ միջոցառումներ:



Երևան. «Արարատ» տրեստի գինեգործարանը (Ճարտ.: Ռ. Եսրայելյան)

Փորձառու ճարտարապետների և ինժեներների մի մեծ խումբ (Ս. Սաֆարյան, Լ. Բարսեղյան, Մ. Գրիգորյան, Մ. Միքայելյան, Ա. Թարխանյան, Յ. Ալեքսիքյան, Լ. Ջարաֆյան, Ս. Բաղդասարյան և այլն) կատարում են խոշոր աշխատանք մասսայական շենքերի շինարարությունը տիպային բարձրորակ նախագծերով ապահովելու համար: Այդ հանգամանքը մեծապես նպաստում է կառուցման սապարեզում գործարանային եղանակների կիրառմանը:

Սովետահայ ճարտարապետության գործնականում նախագծման և կառուցման այս նոր եղանակների կիրառությունը նպաստեց արագ և էժան կառուցելուն, շինարարության աննախընթացորեն մեծ ծրագրերի իրականացմանը:


Վերակառուցման այս դժվարին երկունքը դեռ չի ավարտված, սակայն նրա բարերար ծիւրը արդեն նշմարելի է: Վերջին տարիների ընթացքում սովետահայ ճարտարապետների որոնումները պասկվեցին ստեղծագործական հաջողություններով: Հիշատակության արժանի է նախ և սուսջ Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնի շենքը (Ռ. Ալավերդյան, Ռ. Բաղայան, մասնակցությամբ Ս. Բուրխաջյանի



և Գ. Մնացականյանի), որը շահագործման հանձնվեց անցած տարի ու մեծ գնահատանքի արժանացավ ժողովրդի կողմից: Հարմարավետ ու այժմեական այդ շենքը, նաև ազգային հատկանիշներով, կարող է դասվել սովետահայ ճարտարապետության նվաճումների շարքը:

Նույն մակարդակով է իրականացված «Դինամո» սպորտային ընկերության մարզադահլիճը (Կ. Հակոբյան, Ն. Ալավերդյան), 2500 հոգու տարողությամբ: Նրա ներքին և արտաքին ճարտարապետությունը ներդաշնակ է, այժմեական:

Վերջին տասը տարիների հաջողված շենքերի ու կառուցվածքների թվին են պատկանում Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի արդյունաբերության (Զ. Թորոսյան և Ռ. Մանուկյան) և մշակույթի (Ֆ.



Երևան. Հայկ. ՍՍՀ ժող. տնտեսության նվաճումների ցուցահանդեսի արդյունաբերության տաղավարը (Ճարտ. ճարտ.՝ Զ. Թորոսյան, Լ. Գևորգյան, ինժ. Ռ. Մանուկյան, քանդակ.՝ Ա. Հարությունյան)

Դարբինյան, Ռ. Մելքունյան) տաղավարները, Նոր Զեյթունի ուսանողական հանրակացարանների խումբը (Գ. Քոչար և Ծ. Ազատյան), Բյուրականի աստղադիտարանի գիտական համաժողովների շենքը (Ս. Գուրգադյան), նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի շենքերի խումբը (Է. Տիգրանյան), պատանի մարզիկների դպրոցը (Ֆ. Դարբինյան և Է. Մաֆարյան), Աղվերանի հանգրստի տունը (Ռ. Իսրայելյան, Ս. Պետրոսյան), ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի շենքերի խումբը Աշտարակում (Մ. Մանվելյան, Ս. Գուրգադյան), կառուցվածքների հայկական ինստիտուտի շենքերի խումբը (Մ. Միքայելյան) և շատ ուրիշներ:

Ակնառու են հաջողությունները նաև ներքին ճարտարապետության ասպարեզում՝ օժտված ազգային առանձնահատկություններով և արտահայտչականության այժմեա-

կան միջոցներով: Դրական օրինակներ են հանդիսանում «Արարատ» ճաշարանը (Ս. Մաֆարյան և ուրիշներ), «Արմենիա» հյուրանոցի սրճարանը (Է. Ալթունյան), «Արաքս» սրճարանը (Ս. և Ռ. Կյուրքչյաններ), «Վան» ճաշարանը Լենինականում (Ռ. Եղոյան) և մի շարք այլ գործեր: Այդ ասպարեզում գնալով ավելի բեղմնավոր են դառնում ճարտարապետի, նկարչի և քանդակագործի ստեղծագործական համագործակցության արդյունքները: Այն արտահայտություն է գտել նաև ճարտարապետական փոքր ձևերի ասպարեզում. վերջին տարիների ընթացքում Երևանում, Լենինականում և այլ բնակավայրերում կանգնեցվել են բազմաթիվ արձաններ, հուշարձաններ ու կոթողներ, որոնք զգալիորեն նպաստում են բնակավայրերի առանձին մասերի գեղարվեստական մակարդակի բարձրացմանը: Ի թիվս հաջողված գործերի, պետք է հիշատակել Սասունցի Դավթի արձանը Երևանի կայարանամերձ հրապարակում (Ե. Քոչար), հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի (քանդ. Ս. Բաղդասարյան, ճարտ. Լ. Սարոյան), Միքայել Նալբանդյանի (քանդ. Ն. Նիկողոսյան, ճարտ. Զ. Թորոսյան), Սայաթ-Նովայի (քանդ. Ա. Հարությունյան, ճարտ. Է. Սարայան), Երևանի հյուսիսային և արևմտյան «Դարպասները» (քանդ. Ա. Հարությունյան, ճարտ. Ռ. Իսրայելյան), «Բարեկամություն» կոթող-հուշարձանը Լենինականում (ճարտ. Հ. Զիվանյան) և այլն: Կառուցման ընթացքում է 1915 թ. Եղեռնի զոհերի հուշարձանը (Ա. Թարխանյան, Ս. Քալաշյան և Հ. Խաչատրյան), որի հետաքրքրիչ ուրվանկարը արդեն գծագրվում է Ծիծեռնակաբերդի բարձունքում՝ Հրազդանի աջ ափին: Երբ խոսում ենք մեր քաղաքների գեղագիտական հատկանիշների բարձրացման մասին, հարկ կա առանձին հիշատակել նաև ջրային տարածությունների ստեղծումը նրանցում, որպիսի հանգամանքը միևնույն ժամանակ ծառայում է բնակավայրերի առանձին մասերի միկրոկլիմայի բարելավմանը և բնակչության հանգստանալի: Երևանցիների կողմից շատ է սիրվել օպերային թատրոնի մոտ ստեղծված «Կարապի լիճը» (Գ. Մուշեղյան), «Հաղթանակ» զբոսայգու լճակը (Հ. Հակոբյան), ջրջանային զբոսայգու ջրավազանը (Մ. Հայրապետյան, Ֆ. Զարգարյան): Ջրային տարածություններ են ստեղծվել Դիլիջանում, Կիրովականում, Ղափանում և մի շարք ուրիշ բնակավայրերում: Ամենամոտ ապագայում մայրաքաղաքի հարավային մասում շարք կմտնի «Երևանյան ծովը», որը կկազմի այստեղ ստեղծվող հանգստավայրի գարդը:



ու լայն կերպով կօգտագործվի սպորտային նպատակների համար:

Կա ևս մի կարևոր բնագավառ, որի սպարեզում նշանակալից են սովետահայ ճարտարապետության նվաճումները: Դա արդյունաբերական շենքերի ու կառուցվածքների բնագավառն է: Նախորդ շրջանի գործերի համեմատությամբ՝ Երևանի սոսնձին հիդրոկայանի (Ս. Թամանյան), գինու և կոնյակի (Ռ. Եսրայելյան, Գ. Քոչար և Հ. Սարգսյան) գործարանների, Կիրովականի քիմիական կոմբինատի (Վ. Բարանով), Գյումուշի հիդրոկայանի (Տ. Մարության) արդյունաբերական շենքերի թիվը վերջին տարիների ընթացքում բազմապատկվեց: Նորերից հրչատակենք Կիրովականի արհեստական մետաքսաթելի կոմբինատը (Վ. Խոլոպաշյան, Բ. Հարությունյան, Բ. Դանոյան, Գ. Բալյան, Խ. Խանամիրյան), Երևանի քիմիական ռեակտիվների գործարանը (Վ. Անանյան, Վ. Սվետոխյան, Ս. Բախշին, Է. Նազարյան), գինեթթվոտի գործարանը (Վ. Անենյան), բազմահարկ ալտոգարածը Էջմիածնի խնուղու սկզբում (Ս. Ալեքսանյան) և այլն: Հայաստանի քարտեզի վրա առաջացան արդյունաբերական նոր ավաններ՝ Քաջարանը, Դաստակերտը, Ախթալան, Լուսավանը, Արարատը, որոնցում համապատասխան նպատակահարմարությամբ տեղաբաշխված են արդյունաբերական ու բնակելի շենքերի խմբերը:

Ի թիվս նշանակալից ինժեներական կառուցվածքների, հարկ կա հիշատակելու վերջերս շարք մտած Երևանի ուղղանցուցը (Վ. Անանյան), որի շնորհիվ մայրաքաղաքի հարավային մասում հարմար կապ ստեղծվեց երկու կարևոր մայրուղիների միջև:

Տարեց-տարի բարելավվում է քաղաքների փողոցների ցանցը, նրանց ծածկույթը, կատարելագործվում ու այժմեական են դառնում երթևեկության միջոցները, բարձրացվում է քարեկարգման մակարդակը, ավելացվում հասարակական կանաչի տարածությունները:

Վերանայվում ու վերակազմվում են բուն կերպով զարգացող քաղաքների գլխավոր հատակագծերը, քաղաքաշինության ժամանակակից պահանջների համեմատ: Այդ ուղղությամբ խոշոր աշխատանքներ են տարվում նախագծային ինստիտուտներում: «Երեվաննախագիծ» ինստիտուտի հատակագծային արվեստանոցի կոլեկտիվը (ղեկավար՝ Մ. Մազմանյան) վերջին տարիների ընթացքում շատ կարևոր գործեր է կատարել: Արդեն ավարտված է մայրաքաղաքի նոր, թվով չորրորդ հատակագծի կազմումը (նեղիկներ՝ Մ. Մազմանյան, Է. Պապյան, Գ. Մորզա, Յ. Չախալյան), որը հեռանկարային զարգացման ժամանակամիջոցում (մինչև 1980 թվականը) նախատեսում է Երևանի ազգաբնակչության աճ մինչև 900 հազար հոգի: Նույն ինստիտուտում մշակվում է Երևանի կենտրոնական մասի, ինչպես նաև գլխավոր պողոտայի վերակառուցման ու կառուցապատման նախագծերը: Հանրապետության մյուս քաղաքների հատակագծման ուղղությամբ լայն աշխատանք է տարվում «Հայպետնախագիծ» ինստիտուտում: Այստեղ կազմված են Լեհիկանյանի (Փ. Մանուկյան), Կիրովականի (Մ. Գևորգի), Դիլիջանի (Ռ. Գրիգորյան) և մի շարք այլ քաղաքների ու շրջանային կենտրոնների հատակագծերը, ինչպես նաև նրանց կենտրոնական մասերի կառուցապատման նախագծերը: Նույն կարգի աշխատանքներ գյուղական բնակավայրերի համար տարվում են «Հայգյուղնախագիծ» ինստիտուտում:

Հանրապետությունում ծավալված քաղաքաշինության բուն աշխատանքների բովանդակի և վարպետացվել է սովետահայ ճարտարապետների մի մեծ սերունդ, որը հաջողությամբ կարողանում է լուծել քաղաքաշինության ու ճարտարապետության ինչպես տեսական, այնպես էլ գործնական հարցերը: Ազնվորեն տոգորված ժողովրդին ծառայելու փեսմ գաղտնիարով, այդ սերունդը մեծ ներդրում կատարեց Սովետական Հայաստանի խոշոր նվաճումների մեջ, նվաճումներ, որոնք մարմնավորում են վերածրված հայ ժողովրդի հերոսական ներկան:

